ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/230

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Հակոբ Սոսյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մխիթարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21» գնանշման հարցման ընթացակարգ, բամբակյա գործվածքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14386-2021 գրությամբ «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2021թ. Ե/40/2313-21 գրության հիման վրա, 07.09.2021թ.-ին «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.09.2021թ.-ին:

09.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/230 համարի ծածկագիրը:

23.09.2021թ.-ին և 01.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.10.2021թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 01.09.2021թ.-ի Ե/40/2313-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «Բամբակյա գործվածք»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգ, որի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Հակոբ Սոսյան ԱՁ-ի միջև 2021թ. հուլիսի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-9-ՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը՝ 11051040 (տասնմեկ միլիոն հիսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն պայմանագրի հավելված 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) «Բամբակյա գործվածք»-ի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 30 օրացուցային օր, մինչև 20.08.2021թ.:

Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ հավելված 1.1 նշված է, որ մատակարարվող գործվածքը պետք է լինի բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային:

Ինչպես հրավերում, այնպես էլ Պայմանագրով նախատեսված որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ նախատեսված չէ:

Համաձայն 17.08.2021թ. ԱԿՏ № 08.21-258 Ո մուտքային վերահսկողության ակտի Պայմանագրով սահմանված ժամկետում Հակոբ Սոսյան ԱՁ-ի կողմից մատակարարվել է բամբակյա գործվածք, խտությունը՝ 250±5% գ/մ2, քանակը՝ 12588մ2 (3076,9կգ): Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են, որ բամբակյա գործվածքի 850կգ գլանափաթեթային տեսքով է, իսկ մնացածը պոլիէթիլենային փաթեթավորմամբ, 700կգ մուգ գույնի է (կարմիր, կապույտ), ուստի արձանագրվել են գույնի և փաթեթավորման անհամապատասխանություններ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ:

Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան, «ՀԱԷԿ» ՓԲԸ հրաժարվել հանձնված ամբողջ ապրանքներից և ապրանքը ամբողջությամբ հետ է վերադարձվել Հակոբ Սոսյան ԱՁ-ին (հիմք 23.08.2021թ. կազմված ստացականը):

Հակոբ Սոսյան ԱՁ-ն 25.08.2021թ. դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ պայմանագրի ժամկետը երկարաձգելու խնդրանքով, սակայն պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետը 20.08.2021թ. ավարտված է եղել և այն չի երկարաձգվել, քանի որ չի պահպանվել ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի և Պայմանագրի 8.6 կետի պահանջները:

31.08.2021թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել է Հակոբ Սոսյան ԱՁ-ի հետ 2021թ. հուլիսի 20-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը:

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջներով, այն է՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը», Ձեզ ենք ներկայացնում վերը նշված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 16.09.2021թ.-ի թիվ Ե/13/2457-21 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ինչպես արդեն ներկայացվել է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման գրությամբ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «Բամբակյա գործվածք»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի միջև 2021թ. հուլիսի 20-ին կնքվել է № ՀԱԷԿ-9-ՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 11051040 (տասնմեկ միլիոն հիսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Պայմանագրի Հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) համաձայն «Բամբակյա գործվածք»-ի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 30 օրացուցային օր՝ մինչև 20.08.2021թ.:

Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ Հավելված № 1-ում նշված է, որ մատակարարվող գործվածքը պետք է լինի բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային:

Ինչպես գնման ընթացակարգի հրավերով, այնպես էլ Պայմանագրով որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ նախատեսված չէ:

Համաձայն 17.08.2021թ. ԱԿՏ № 08.21-258 Ո մուտքային վերահսկողության ակտի Պայմանագրով սահմանված ժամկետում «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի կողմից մատակարարվել է բամբակյա գործվածք, խտությունը՝ 250±5% գ/մ2, քանակը՝ 12588մ2 (3076,9կգ): Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են, որ բամբակյա գործվածքի 850կգ գլանափաթեթային տեսքով է, իսկ մնացածը պոլիէթիլենային փաթեթավորմամբ, 700կգ մուգ գույնի է (կարմիր, կապույտ), ուստի արձանագրվել են գույնի և փաթեթավորման անհամապատասխանություններ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ:

Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հրաժարվել է հանձնված ամբողջ ապրանքներից և ապրանքը ամբողջությամբ հետ է վերադարձվել «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին, որի արդյունքում կողմերի միջև կազմվել և 23.08.2021թ. ստորագրվել է համապատասխան ստացական:

«Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ն 25.08.2021թ. դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ պայմանագրի ժամկետը երկարաձգելու խնդրանքով, սակայն պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետը 20.08.2021թ. ավարտված է եղել և այն չի երկարաձգվել, քանի որ չի պահպանվել ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի և Պայմանագրի 8.6 կետի պահանջները:

31.08.2021թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել է «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի հետ 2021թ. հուլիսի 20-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը:

«Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի կողմից 10.09.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած «Կարծիք» գրության մեջ նշված է՝ «...պատվիրատուի կողմից ներկայացված ակտում կամայականորեն նշվում է, որ մատակարարված ապրանքը բաց գունավոր երանգներ են»:

Համաձայն 17.08.2021թ. № 08.21-258 Ո ակտի արձանագրվել է, որ մատակարարվել է 12558մ2 (3076,9կգ) ապրանք, որի դիտողություն մասում նշված է՝ «բամբակյա գործվածքների 2376կգ ունեն բաց գունավոր երանգներ և 2226 կգ ունեն պոլիէթիլենային փաթեթավորում», իսկ անհամապատասխանություններ մասում՝ «առկա են անհամապատասխանություն գույների և փաթեթավորման»:

Պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն սահմանված է մատակարարել գործվածք՝ «Բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային»:

«Հակոբ Սոսյան» ԱՁ-ի կողմից մատակարարվել է պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք և մատակարարը կարծում է, որ պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելը չի կարող հանդիսանալ պայմանագրի խախտում:

Հաշվի առնելով, որ գնման առարկան օգտագործվելու է տեխնիկական (լվանալու, մաքրելու) նպատակներով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 13-րդ հոդվածներով, ապահովելով մրցակցության հավասար

պայմաններ հնարավոր մասնակիցների համար, չհանգեցնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման գործընթաց:

Տարօրինակ է այն, որ Պայմանագրով նախատեսված է մատակարարել գործվածք գունավոր մուգ գույների մեջ, սակայն մատակարարը Պայմանագիրը կնքելուց հետո եզրակացրել է, որ սպիտակի վրա ծածկված զարդանախշերով գործվածքը համարվում է մուգ գույնի, իսկ նախատեսված գլանափաթեթայինը՝ պոլիէթիլենային փաթեթավորում:

Պատվիրատուի կողմից Պայմանագիրը ստորագրվելուց հետո, հրավերի 9.5 կետի պահանջներով, Մատակարարի էլեկտրոնային փոստին է ուղարկվել պայմանագրի սկանավորված տարբերակը մատակարարին հնարավորություն տալով մինչև Պայմանագրի բնօրինակը ստանալը նախաձեռնել մատակարարման գործընթացը:

Ինչ վերաբերում է Պայմանագրի 5.1 կետի պահանջներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N 526-Ն Որոշման 110 և 111 կետերի պահանջներին, ապա Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին նախապես տեղեկացվել է, որ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման Արձանագրությունը (հավելված N 3) անհրաժեշտ է ներկայացնել երկու բնօրինակից, թղթային եղանակով, մատակարարվող ապրանքի հետ միասին:

Մատակարարը նշում է նաև, որ Պատվիրատուի կողմից չի առաջարկվել ողջամիտ ժամկետում շտկել վերը նշված անհիմն պատճառաբանված անհամապատասխանությունները և ստիպողաբար հետ է վերադարձվել ամբողջ ապրանքը:

Մատակարարի գործողությունները, մատակարարման համար սահմանված ժամկետում շտկելու և Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք ներկայացնելու, որևէ կերպ սահմանափակված չեն եղել, իսկ ինչ վերաբերում է Մատակարարի հռետորաբանությանը՝ «...անհիմն պատճառաբանված անհամապատասխանությունները և ստիպողաբար հետ է վերադարձրել...», պարզապես անհասկանալի է:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք՝ «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած Կարծիքը, այն մասին, որ իր կողմից մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրով նախատեսված ապրանքի բնութագրին ամբողջությամբ անհիմն է:»:

3. <u>«Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14386-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 10.09.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 09.09.2021 թվականին էլեկտրոնային հաղորդագրությանը, ՍՑ-ԼՕ-2021/230 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Ինչպես փաստում է պատվիրատուն, հրավերում և այնպես էլ պայմանագրում չի եղել որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ: Որպես բարեխիղճ մատակարար իմ կողմից ներկայացվել է նմուշ և ներկայացված նմուշները պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից արժանացել է հավանության, հավաքարար անձնակազմի կողմից փորձարկվել է նպատակային օգտագործման եղանակով, որը օգտագործելու էին որպես մաքրման լաթ և հայտնել են շատ դրական կարծիք:

Իմ կողմից ներկայացվել է անկախ փորձագիտական «Ստանդարտ Դիալոգ» ՍՊ ընկերության կողմից հաստատված բամբակյա գործվածքի տեխնիկական պայմանների վերաբերյալ փորձարկման 04.08.2021թ. N 1305 արձանագրությունը, որտեղ հաստատվում է ցուցանմուշի համապատասխանությունը տեխնիկական պայմաններին, որը նաև պատվիրատուի 17.08.2021 թվականի N 08.21-258-Π ակտով է հաստատում բամբակյա գործվածքի տեխնիկական պայմաներին բավարարելը, սակայն պատվիրատուի կողմից ներկայացված ակտում կամայականորեն նշվում է, որ մատակարարված ապրանքը բաց գունավոր երանգներ են: Պատվիրատուի կողմից հաշվի չի առնվում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2 կետի 3-րդ ենթակետը և որպես մաքրման լաթ օգտագործման համար տարակերպ է մեկնաբանում տեխնիկական բնութագրում (Բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր

ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային:) նշված բնութագրի պայման՝ գունավոր մուգ գույների մեջ լինելը: Իմ կողմից մատակարարված բամբակյա գործվածքը ամբողջությամբ եղել է պոլիէթիլենային փաթեթավորմամբ, որը ապահովել է ապրանքի անվնաս լինելը (չկեղտոտվելը, չպատառոտվելը, չխոնավանալը) և չեմ կարծում, որ դա կարող է հանդիսանալ պայմանի խախտում: Սակայն պատվիրատուն անհասկանալի բացատրությամբ գրել է, որ ապրանքի մի մասը գլանափաթեթային է իսկ ինչ որ մաս պոլիէթիլենային փաթեթավորմամբ:

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետը պատվիրատուն կարող էր նշել միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտները կամ նշեր գույնի սպեկտրալ կոդ օրինակ այս հղումով կարելի է նայել https://aregnazan.wordpress.com/, որը կհստակեցներ մգության աստիճանը և կխուսափեր կամայական կարծիք հայտնելուց: Միևնույն ժամանակ տեխնիկական բնութագրում նշված չի եղել, որ գործվածքը պետք է լինի համասեռ մուգ, որից ելնելով ես եզրակացրել եմ, որ սպիտակի վրա մուգ գույներով ծածկված զարդանախշերով գործվածքը համարվում է մուգ գույնի:

Պայմանագիրը կնքվել է 20.07.2021 թվականի պատվիրատուն պայմանգիրը armeps համակարգի միջոցով հաստատել է 09.08.2021 թվականին իմ կողմից ապրանքը մատակարարվել է 05.08.2021 թվականին: Ապրանքը մատակարարելու օրը իմ իրավունքները սահմանափակված են եղել, քանի որ պայմանագրի 5.1 կետի՝ մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3) չեմ կարողացել մուտքագրել հավելված N 3.1 և հավելված N 3 փաստաթղթերը:

Պատվիրատուի կողմից 17.08.2021 թվականի կազմված N 08.21-258-Π մուտքային վերահսկողության (կազմակերպության ներքին փաստաթղթաշրջանառության) ակտով 18.08.2021 թվականի էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացվել է վերը շարադրված անհամապատասխանության մասին: Պատվիրատուի կողմից խախտվել է 4 մայիսի 2017

թվականի ՀՀ կառավարության N 526-Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ կարգ) 110 և 111-րդ կետերը, ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 20-ի N 228-Ն հրամանը:

Պատվիրատուի կողմից չի առաջարկվել ողջամիտ ժամկետում շտկել վերը նշված անհիմն պատճառաբանված անհամապատասխանությունները, չի ընդունել իր իսկ ակտով հաստատված այն խմբաքանակը, որը համապատասխանում է տեխնիկական բնութագրի պայմաններին և ստիպողաբար հետ է վերադարձրել ամբողջ ապրանքը՝ ինձ պատճառելով ֆինանսական զգալի վնասներ: Նշված փաստերից կարելի է եզրակացնել որ պատվիրատուն ամեն գնով չի ցանկացել ընդունել ապրանքը և ոտնահարվել է իմ իրավունքները:»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/230 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի միջև 20.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեն պայմանագիրը ստորագրելուց պահից 30 օրացույցային օրվա ընթացում:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 31.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2299-21 համարի ծանուցման համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «բամբակյա գործվածք» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲԱ 23/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Հակոբ Սոսյան ԱՁ-ի միջև 2021թ.-ի հուլիսի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԴՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը՝ 11051040 (տասնմեկ միլիոն հիսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ հավելված 1.1 հստակ նշված է, որ մատակարարվող գործվածքը պետք է լինի բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային: Ինչպես հրավերում, այնպես էլ Պայմանագրով նախատեսված որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ նախատեսված չէ: Համաձայն 17.08.2021թ. ԱԿՏ N2 08.21-258 Ո մուտքային վերահսկողության ակտի Պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերության կողմից մատակարավել է բամբակյա գործվածք, խտությունը՝ 250±5% գ/մ2, քանակը՝ 12588մ2 (3076,9կգ): Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են, որ բամբակյա գործվածքի 850կգ գլանափաթեթային տեսքով է, իսկ մնացածը պոլիէթիլենային փաթեթավորմամբ, 700կգ մուգ գույնի է (կարմիր, կապույտ), ուստի արձանագրվել են գույնի և փաթեթավորման անհամապատասխանություններ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ: Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան ս/թ օգոստոսի 3-ին կազմվել է ստացական և մատակարարված ապրանքը ամբողջությամբ հետ է վերադարձվել: Ապրանքների մատակարարման ժամկետը երկարացնելու Ձեր պահանջը հնարավոր չէ կատարել, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի և Պայմանագրի 8.6 կետի պահանջները: Միաժամանակ տեղեկացրել են, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել է «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի հետ 2021թ.-ի հուլիսի 20-ին կնքած թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205» պայմանագիրը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14386-2021 գրությամբ «Հակոբ

Սոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին:

Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Ընդ որում, եզրակացությունը տրամադրվում է ոչ շուտ, քան պայմանագրով արձանագրության հաստատման համար սահմանված վերջնաժամկետին նախորդող աշխատանքային օրը: Սույն կարգի 50-րդ կետով նախատեսված ֆիզիկական անձը մինչև սույն կետով նախատեսված եզրակացությունը հաստատվելու օրը պատասխանատու ստորաբաժանմանը գրավոր ներկայացնում է դիրքորոշում՝ մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ պայմանագրի պահանջներին համապատասխանության մասին: Եզրակացության տրամադրման համար սահմանված վերջնաժամկետից հետո ներկայացված դիրքորոշումը չի քննարկվում պատասխանատու ստորաբաժանման կողմից: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը գործընթացին մասնակցելու մասին ֆիզիկական անձին տեղեկացնում է հանձնման-ընդունման նպատակով պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնվելուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված դիրքորոշումը՝

1) դրական է, ապա դրա մասին եզրակացության մեջ կատարվում է համապատասխան նշում.

2) բացասական է, սակայն պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը չի ընդունում առարկությունը, ապա վերջինիս կողմից տրվում է դրական եզրակացություն, իսկ առարկությունները քննարկվում են պատասխանատու ստորաբաժանման և պայմանագիրը կնքած անձի կողմից, անհրաժեշտության դեպքում, դրան մասնակից դարձնելով նաև առաջարկությունները ներկայացրած ֆիզիկական անձին: Քննարկման արդյունքներն արձանագրվում են, կազմվում է ամփոփաթերթ, որն ստորագրվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից: Քննարկումների անցկացման և արդյունքների ամփոփման ժամկետը չի կարող ավելի լինել արձանագրությունը հաստատվելուն հաջորդող երեսուն աշխատանքային օրվանից: Ամփոփաթերթն ստորագրվելուն հաջորդող աշխատանքային օրը դրա բնօրինակից արտատպված տարբերակը պատասխանատու ստորաբաժանումը հրապարակում է տեղեկագրում: Եթե միևնույն պայմանագրի շրջանակում ֆիզիկական անձի ներկայացրած դիրքորոշումն առնվազն երկու անգամ չի հիմնավորվում, ապա գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած անձը զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում արդյունքի ընդունման գործընթացին մասնակցելու

հնարավորությունից, որի մասին հիմքերն առաջանալուն հաջորդող աշխատանքային օրը պատասխանատու ստորաբաժանումը տեղեկագրում հրապարակում է հայտարարություն: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան, ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ընդ որում՝

1) պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ հաշվապահական ձևակերպման հիմքը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանության մասին գրավոր եզրակացության հիման վրա պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված արձանագրության առկայությունն է, իսկ մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումը պահեստի պատասխանատուն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված արձանագրության պատճենի (ներառյալ գրավոր եզրակացության), իսկ ապրանքների գնման դեպքում նաև ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի, պատճենի հիման վրա, որը վերջինիս տրամադրվում է դրա կազմման օրը.

2) պատասխանատու ստորաբաժանումն արձանագրության, ներառյալ գրավոր եզրակացության, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճեններն այն կազմելու օրը գրավոր տրամադրում է պատվիրատուի ֆինանսական ծառայությանը:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» Ա/Ձ-ն ընդդեմ «Միլլար» Ա/Ձ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «բամբակյա գործվածք» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲԱ 23/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի միջև 2021թ.-ի հուլիսի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԴՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը՝ 11051040 (տասնմեկ միլիոն հիսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ հավելված 1.1 հստակ նշված

է, որ մատակարարվող գործվածքը պետք է լինի բամբակյա, խտությունը 250±5% գ/մ2, բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, գունավոր մուգ գույների մեջ, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, գլանափաթեթային: Ինչպես հրավերում, այնպես էլ Պայմանագրով նախատեսված որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ նախատեսված չէ: Համաձայն 17.08.2021թ.-ի ԱԿՏ N 08.21-258 Ո մուտքային վերահսկողության ակտի Պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերության կողմից մատակարավել է բամբակյա գործվածք, խտությունը՝ 250±5% գ/մ2, քանակը՝ 12588մ2 (3076,9կգ): Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են, որ բամբակյա գործվածքի 850կգ գլանափաթեթային տեսքով է, իսկ մնացածը պոլիէթիլենային փաթեթավորմամբ, 700կգ մուգ գույնի է (կարմիր, կապույտ), ուստի արձանագրվել են գույնի և փաթեթավորման անհամապատասխանություններ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ: Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան ս/թ օգոստոսի 3-ին կազմվել է ստացական և մատակարարված ապրանքը ամբողջությամբ հետ է վերադարձվել: Ապրանքների մատակարարման ժամկետը երկարացնելու Ձեր պահանջը հնարավոր չէ կատարել, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի և Պայմանագրի 8.6 կետի պահանջները:

Վերոնշյալները փաստական հանգամանքների հաշվառմամբ՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի դրույթները, միակողմանի լուծել է «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ի հետ 2021թ.-ի հուլիսի 20-ին կնքած թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205« պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 31.08.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2299-21 համարի ծանուցումը:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով 17.08.2021թ.-ի ԱԿՏ N 08.21-258 Ո մուտքային վերահսկողության ակտը, «ստացական» վերտառությամբ փաստաթղթով Մասնակցին տեղեկացնելով վերջինիս

կողմից մատակարարված ապրանքի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին և վերադարձնելով մատակարարված ապրանքները, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ ապրանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, Գնորդն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն

դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (վաճառողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի ապրանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում Պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14386-2021 գրությամբ «Հակոբ Սոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/230 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**